

Հարությունյան Լ. Վ. Սահակյան Կ. Վ.

ԱՐԵԱՍՏԱՆԻ ԲԱԱԿԱՎԱՑՐԵՐԻ ԿԱԱԶԱՊԱՏՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆԱԼԻԶԸ

Հին Հայաստանի բնակավայրերը աչքի էին ընկնում կանաչ տնկարկների մեծ առատությամբ, կանաչապատման բնագավառում օգտագործված տեսակների մեծ քազմազանությամբ և լրջաչափատման բարձր կուտուրայով: Պատմական հարուստ տեղեկություններ են մեզ հասել Տուշպայի (Վան), Արմավիրի, Տիգրանակերտի, Արտաշատի, Դվինի և Հին Հայաստանի մյուս մայրաքաղաքների ու խոշոր քաղաքների կանաչապատման մասին: Այսպես օրինակ, մեր թվարկությունից դեռև 70 տարի առաջ Տուշպա քաղաքում կառուցվել է աշխարհի յոթերորդ հրաշալիքը՝ Հանդիսացող բարելական կախովի այգու կրկնօրինակը:

Սակայն կանաչապատման այդ հարուստ ավանդույթները հետագայում մուացության են մատնելի են, կորցնելով իրենց պետականությունը, հետագայում ավելի ու ավելի քիչ է ուշադրություն դարձվել բնակավայրերի կանաչապատման վրա: Դրա հետեւանքով նախառովետական Հայաստանի բնակավայրերը, չնչին բացառությամբ, կանաչ տարածություններից համարյա գուրկ էին:

Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից կրկին մեծ ուշադրություն է դարձվում Հանգական ՍՍՀ-ի բնակավայրերի կանաչապատման հարցի վրա, որի շնորհիվ համարյա բոլոր խոշոր բնակավայրերը սկսում են աստիճանաբար ծածկել փարթամ կանաչով, շրջապատէում պաշտպանիչ կանաչ գոտիներով:

Այնուամենայնիվ, ներկայումս մեր հանրապետության կանաչապատման տեմպերը խիստ զիջում են շինարարության և բնակչության աճման տեմպերին: Այժմ հանրապետության յուրաքանչյուր բնակչին 4-5 անգամ պակաս կանաչ տարածություն է հասնում, քան նախատեսված է նորմայով: Շինարարության և կանաչապատման տեմպերի միջև գոյություն ունեցող խզումը էլ ավելի է խորանում, քանի որ ներկայումս մեծ ծափալի շինարարություն է կատարվում, իսկ կանաչապատման տեմպերը մնում են նախկինը: Ամեն տարի կանաչապատմում էլ պլանով նախատեսված տարածությունների ընդամենը 10-15%:

Սակայն դա միայն քանակական կողմն է: Մեր հանրապետությունը չունի մի այնպիսի զրոսայգի կամ պուրակ, որն օրինակ ծառայեր պարկաշինարարների համար: Որպես կանոն, կանաչ տնկարկները աչքի չեն ընկնում բարձր դեկորատիվությամբ, բնդ որում մեծ մասամբ կազմված են անտառային տիպի խիտ տնկարկներից: Կանաչապատման բնագավառում մեծ մասամբ օգտագործվում են ցածրորակ, տեղական պայմաններին գատ հարմարված ծառաթփատեսակներ, որոնք դիմացկուն են երկարակյաց չեն, միաժամանակ աչքի չեն ընկնում դեկորատիվ բարձր արժանիքներով: Զբոսայգիները են պուրակները մեծ մասամբ գուրկ են

ժամանակակից պարկերին անհրաժեշտ տարրերից: Դրանք աշխատավորության  
լիարժեք հանգստին ծառայել չեն կարող:

Դեռևս քիչ ուշադրություն է դարձվում կանաչապատման գեղագիտական  
ձևավորման վրա: Պուրակները և զբոսայգիները նախագծում են այնպիսի մասս-  
նագետներ, որոնք հեռու են կանգնած արվեստից, զուրկ ճաշակից: Մինչդեռ  
հայտնի է, որ սովորաբար պարկաշինարարությամբ զբաղվում են ճարտարա-  
պետները, գեղանկարիչները գիտնականները: Օրինակ Փրանսիական այդիների  
վերածննդի դարաշրջանը պարտական է Հռչակավոր նկարիչ Անտրե լը Նորմանին:  
Տոպիրալ արվեստի կատարելագործողներ հանդիսացել են իտալիան ճարտարա-  
պետներ և քանդակագործներ Լորենցո Բեռնինին և Ֆրանչեսկո Բորրոմինին:  
Հռչակավոր Լյոնուտորը, որը ստեղծել է Վերսալի արքայական այգին, գեղանկա-  
րիչ և ճարտարապետ էր: Պարկաշինարար Դյուքսին մեծ արվեստագետ էր: Պար-  
ակաշինարարությամբ զբաղվել են ժամանակակից մասնակիցները: Հռչա-  
կարիչներ Պյուլիերը, Լեբլոնը, Գոնզագոն, Ռաստորելին և այլն:

Ահա թե ինչու, դասական պարկերը հանդիսացել են նույնպիսի ստեղծագործ-  
ական աշխատանք, ինչպիսիք են գեղարվեստական նկարը, պոեմը, դրաման, վե-  
պը, հուշարձանը կամ ճարտարապետական կոթողը:

Մեզ մոտ ընդհանրապես թերագնահատվում է կանաչապատման նշանակու-  
թյունը. Մեր հանրապետության բնակավայրերի կանաչապատման հարցերով զբաղ-  
վում են կոմունալ մինիստրությունը, քաղովետների և շրջանային սովետ-  
ների բարեկարգման գրասենյակները և նախագծային ինստիտուտները, որոնք  
զուրկ են բարձրորակ մասնագետներից՝ դենդրոլոգներից և գեղորատոր-ինժեներ-  
ներից. Այս գժվարին և մասնագիտական մեծ հմտություն պահանջող գործը  
վստահված է պատահական մարդկանց, որոնք չեն ճանաչում տեսակները, ծա-  
նոթ չեն նրանց կենսաբանական առանձնահատկություններին: Դրա հետեւանքով  
լուսասեր տեսակները տեղադրվում են խոշոր, արագած ծառերի սաղարթի տակ և  
չորադիմացկուն տեսակները տնկվում են խոնավասեր բույսերի հետ, ստվերատար  
տեսակները՝ բաց տարածություններում, խոնավասերները՝ զրոսայգիների համեմ-  
մատարար չոր հատվածներում: Խնդըստինքյան հասկանալի է, որ նման տնկարկ-  
ները երկարակյաց և դիմացկուն լինել չեն կարող և արագորեն շարքից դուրս  
են գալիք:

Կանաչապատման աշխատանքների ետ մնալու հիմնական պատճառներից մեկն  
էլ գեղորատիվ ու բարձրորակ տնկանյութի բացակայությունն է: Մենք չունենք  
ժամանակակից պահանջները բավարարող գեղորատիվ տնկարաններ, եղածներն էլ  
փոքր են, աղքատիկ ասորտիմենտով, բացակայում են հեռանկարային և բարձրորակ  
տեսակները: Դա հանգեցնում է այն բանին, որ կանաչապատման մեջ օգտագործ-  
վում են հիմնականում ոչ հեռանկարային, ստանդարտին չհամապատասխանող  
անորակ ծառեր ու թփեր:

Մեր կանաչապատող կազմակերպությունները հաճախ բավարարվում են դրսից  
բերված տնկանյութով, որը՝ տեղական պայմաններին վատ հարմարված լինելով,  
միշտ էլ դիմացկուն չէ: Տարիներ շարունակ հանրապետության կանաչապատող  
կազմակերպությունները տնկանյութ են ներմուծել Հյուսիսային Կովկասի,  
Դոնբասի, Վրաստանի, Ադրբեյջանի և Միջին Ասիայի հանրապետությունների տրն-  
կարաններից: Այդ տնկանյութը չափազանց թանկ է նստում: Այսպես օրինակ,  
Հյուսիսային Կովկասից բերված արծաթափայլ եղենու մեկ բույսի արժեքը  
կազմել է 15-25 ոռորդի այն գեպքում, երբ տեղական տնկարաններում աճեցնեա-  
լով, դրանց արժեքը չէր անցնի 2-5 ոռորդուց: Նման հազարավոր տնկիներ են  
ներմուծվել լենինական, Կիրովական և այլ քաղաքներ ու շրջանային կենտրոն-

Ներ: Վրացական ՍՍՀ-ից հիմքանի և Նոյեմբերյանի շրջաններ ներմուծված հիմքալայան մայրու, բրգաձեռ նոճու, էլղարյան սոճու, յուրաքանչյուր տնկիի արժեքը կազմել է 7-15 ռուբլի այն դեպքում, երբ տեղական տնկարաններում աճեցնելով, բույսերի արժեքը չէր անցնի 10-15 ռուբլուց: Վրացական ՍՍՀ-ից (Զեստավոնի) սեղափոխված հիմալայան մայրու և կրիպտոմերիայի սերմանարույների արժեքը տեղում աճեցվածների համեմատ քսան անդամթանկ է նստել: Նպատակահարմար չէ նաև սերմեր ներմուծել այլ վայրերից: Հանրապետության բնակչիմայական յուրաքանչյուր գոտում գտնվող տնկարան ինքը պետք է սերմանայութ հայթայթի իր սերիտորիայում գտնվող կանաչ տարածություններից: Եթե այդպիսիք բացակայում են, այդ դեպքում սերմանայութ պետք է ձեռքբերել անալոգ պայմաններում գտնվող վայրերից:

Հանրապետության յուրաքանչյուր բնակչիմայական գոտու համար անհրաժեշտ է ստեղծել դիմերենցված տնկարաններ: Երեանի տնկարանները կարող են բավարարել Արարատյան դաշտի և նախալեռնային շրջանների բնակվայրերի պահանջները: Լենինականում կարելի է հիմնել մեծ տնկարան Շիրակի դաշտավայրի և Սևանի ավազանի կարիքները բավարարելու համար: Հյուսիսային Հայաստանի անտառային շրջանների բնակվայրերի տնկանյութի պահանջը կարելի է բավարարել ընդլայնելով կամ Դիլիջանի դեկորատիվ տնկարանը և կամ էլ խոչըր տնկարան ստեղծելով Ստեփանավան կամ Կիրովական քաղաքներում: Նոյեմբերերյանի շրջանի „Զեյթունների սովորողին կից կարելի է ստեղծել մերձարեադարձային կուրտուրաների դեկորատիվ խոչըր տնկարան, որը ոչ միայն կրավարարի նոյեմբերյանի, թումանյանի, իջևանի և Շամշադինի մերձարեադարձային միկրոշրջաններում գտնվող բնակվայրերի կանաչապատման կարիքները, այլև տնկանյութ կաճեցնի նաև Մեղրու շրջանի բնակվայրերի համար: Գորիս քաղաքում դեկորատիվ տնկարան հիմնելու գեպքում կլուծվեր Զանգեզուրի բնակվայրերի կանչապատման հարցը:

Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս մեր հանրապետությունում քավականին հարուստ փորձ է կուտակվել կանաչապատման ասորտիմենտի բնտրության համար: Հայկական ՍՍՀ դիտությունների ակադեմիայի բուսաբանական այգու և նրա լեռնային բաժանմունքների կողմից կատարված հետազոտական աշխատանքները միանգամայն բավարար են Հանրապետության բնակվայրերի կանաչապատման մի շարք գործնական հարցեր լուծելու համար: Այսպես օրինակ, Արարատյան դաշտի պայմաններում փորձարկված են ավելի քան 1000 տեսակի ծառեր ու թփեր, որոնցից մոտ 230 տեսակը ներկայումս օգտագործվում է Երեանի և շրջակա բնակվայրերի կանաչապատման պրակտիկայում: Մոտ 500 տեսակներ փորձարկվում են Բուսաբանական այգու Սևանի բաժանմունքում: Պարզվել է, որ այդ ասորտիմենտից 100-120 տեսակներ միանգամայն հեռանկարային են լեռնատափաստանային և մարգագետնատափաստանային գոտիների բնակվայրերի կանաչապատման համար: Բուսաբանական այգու Լենինականի նախկին բաժանմունքի ուսումնակարությունների հիման վրա կազմված է Շիրակի դաշտի հեռանկարային ասորտիմենտը: Հյուսիսային Հայաստանի բնակվայրերի կանաչապատման համար մոտ 650 տեսակներ փորձարկել են Բուսաբանական այգու կիրովականի բաժանմունքը, Գյուղագարակի Սոճուտ, և իջևանի դենդրարիները:

Հայկական ՍՍՀ-ի հյուսիսային շրջանների բնակվայրերի կանաչապատման վիճակը՝ Հայկական ՍՍՀ-ի հյուսիսային շրջանների բնակվայրերը գտնվում են բնակչիմայական անբարենպատմ պայմաններում: Բնական անտառապատվածություն

թյունը այստեղ կազմում է 28,9%, որը ամենաբարձր ցուցանիշն է Հայկական ԱՄՀ-ի համար: Այստեղ գտնվում էն հանրապետության երրորդ քաղաքը՝ Կիրովականը, ինչպես նաև արդ յունաբերական խոչոր կենտրոններ՝ Ալավերդին, Իջևանը, կուրորտային քաղաք՝ Դիլիջանը, շրջանային կենտրոններ՝ Ստեփանավանը, Նոյեմբերյանը, Բերդը և մի շարք այլ խոչոր բնակավայրեր:

Անտառային խոշոր զանգվածների առկայությունը կանխորոշում է այս շրջանի մեջմ կիրական, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում բնակչության հանգըստի և աշխատանքի համար: Զնայած, այստեղ ես, կանաչապատման աշխատանքներն զգալիորեն ետ ևն մնում շինարարական տեմպերից, այնուամենայնիվ, այդ բացը չի զգացվում: Զնայած գրան, այս գոտու բնակավայրերի ճարտարապետական-գեղագիտական ձեռավորման նկատառումներով չափազանց մեծ է կանաչապատման դերն ու նշանակությունը և միանգամայն անբավարար է ներկավիճակը:

Կիրովականը հանրապետության արագ աճող արդ յունաբերական խոշոր կենտրոններից մեկն է, երրորդ քաղաքը: Անցած քսան տարիների ընթացքում քաղաքի ազգաբնակչությունը ավելացել է 287%-ով, 54 հազարից հասնելով 155 հազարի, իսկ հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունները, ընդհակառակ պահպան են 77%-ով: Դա հետեւանք է այն բանի, որ քաղաքի տերիորիալիում գտնվող որոշ պարկեր ու պուրակներ շինարարության տակ ընկնելով ոչընչացել են, իսկ այդ ժամանակամիջոցում նորերը չեն ստեղծվել: Եթե 1960 թ.

քաղաքում եղել է 211.5 հա հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն, ընդունելով ընդհանուր ընդհանուր գործություն, ապա 1980 թ. եղել է 180.0 հա և մեկ շնչին բաժին է բնկել բնդամենը 15.0 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն: Վերջին տարիներին այդ ցուցանիշը կիրովականում անընդհատ վայրէջը է ապրում: Ճիշտ է, այստեղ տարեցտարի ավելացել են ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածությունները, 1960 թ. 1128-ի դիմաց 1980 թ. հասնելով 2000-ի, սակայն բնակչության աճի տեմպերի հետ համեմատած այդ աճը աննշան է և տննկառելի:

Կանաչ տնկարկների խիստ կարիք է զգում հատկապիս Այրավերդի ի քաղաքը, որի օդը վարակված է զանազան քիմիական միացություններով և որոնց գեմ պայքարի ամենահուսալի միջոցը, ինչպես Հայտնի է, կանաչ տարածություններն են: Վերջին քսան տարիների ընթացքում (1960-1980), քաղաքի կանաչ տարածությունները ոչ մի քառակուսի մետրով չեն ավելացել, այն դեպքում, երբ բնակչությունը զգալիորեն աճել է: Մեկ շնչին ընկնող հասարակական օգտագործման կանաչապատ տարածություններով ես Ալավերդի ին հանրապետությունում դրավում է վերջին տեղերից մեկը: Եթե այդ ցուցանիշը 1960 թ. կազմել է 14.0 մ<sup>2</sup>, ապա 1980 թ. իջել, հասել է ընդամենը 11.6 մ<sup>2</sup>:

Վերջին քսան տարում չեն ավելացել նաև կուրորտային քաղաք Ստեփանավանի կանաչապատ տարածությունները: Բնակչության աճի հետեւանքով այստեղ ես մեկ շնչին բաժին ընկնող հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունները 1960 թ. 21.5 մ<sup>2</sup>-ից կրճատվել հասել են 17.0 մ<sup>2</sup>:

Բուռն զարգացում ապրող Սպիտակ քաղաքում ես հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունները տարեցտարի նվազելով 1960 թ. 30 մ<sup>2</sup>-ից 1980 թ. հասել են 15.1 մ<sup>2</sup>:

Հյուսիսային Հայաստանի բնակավայրերից վեճակը համեմատաբար լավ է Դիլիջան քաղաքում: Եթե 1970 թ. այստեղ բնակչության մեկ շնչին հասել է

30. 0. 2. Հասարակության օդ տաք ործման իրանաչափատ տարածություն, առաջ

1980 թ. այդ թիվը հասել է 49.0 մ<sup>2</sup>:

Դանդաղ են ավելանում իջևան քաղաքի կանաչապատ տարածությունները, որոնք գերջին բան տարիների ընթացքում ավելացել են ընդամենը 30 %-ով այն դեպքում, երբ բնակչությունը զգալիորեն ավելացել է:

Ելիքակի դաշտ- Գոտվելով անտառազուրկ տափաստանա յին գոտում, Շիրակի դաշտը աչքի է ընկնում խիստ անբարենպաստ կլիմայական պայմաններով: Կանաչ տնկությունը այստեղ ուղղակի կենսական անհրաժեշտություն են: Այնուամենայնիվ, այս ուղղինում բնակվայրերի կանաչապատությունը ընթանում է խիստ դանդաղ տեմպերով: Հանրապետության երկրորդ քաղաքը Լենինականում բնակչության թիվը ներկայում է 250 հազարի: Մեկ չնչին բաժին ընկնող հասուրակական օգտագործման կանաչակատ տարածությունները 1960 թ. կազմել են 25.5 մ<sup>2</sup>, իսկ 1980 թ.՝ 28.7 մ<sup>2</sup>: Սակայն այդ նույն ժամանակամիջոցում ընդհանուր օգտագործման կանաչապատ պարածությունները մնացել են անփոփոխ, չնայած բնակչությունը աճել է 85 %-ով:

Շիրակի դաշտի երկրորդ քաղաքը Արթիկը նույնպես դանդաղ տեմպերով է կանաչապատվում: 1960 թ. մեկ բնակչին բաժին է ընկել 12.7 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն: Ներկայումս այդ ցուցանիշը կազմում է 11.9 մ<sup>2</sup>:

Մարալիկ քաղաքատիպ ավանը համարյա զուրկ է կանաչապատ տարածություններից: Այս կամ այն չափով կանաչապատված են միայն գլխավոր փողոցները և որոշ բակեր:

Հայկական ՍՍՀ կենտրոնական շրջաններ և Սեամի ավագան-Հայկական ՍՍՀ-ի ամենանտառազուրկ շրջաններն են: Կենտրոնական շրջանների անտառապատվածությունը մեկ մետր<sup>2</sup>-ում է 2.0, իսկ Սեամի ավագաններ՝ ընդամենը 0.8%: Զնայած այստեղ անտառապատման - կանաչապատման աշխատանքները մեծ հաջողությամբ են ընթանում, սակայն խիստ աննպաստ բնակչիմայական պայմանները պահանջում են, որպեսզի առաջիկայում այդ տեմպերը ավելի ուժեղացվեն: Կանաչ տնկությունը այստեղ ունեն առնիտարահիգիենիկ չափազանց կարեղունակություն: Դրանց միջոցով բարելավվում են առնիտարահիգիենիկ և միկրոկլիմայական պայմանները: Ինչ վերաբերում: Է Սեանի ավագաններն, ապա տընկարգներն, այստեղ ունեն հիմնականություն պաշտպանիչ - գեղագիտական նշանակություն:

Հայկական ՍՍՀ-ի կենտրոնական շրջանների բնակվայրերի կանաչապատման ներկա վիճակի մասին կարելի է գաղափար կազմել Երեանի օրինակով:

Սովետական իշխանության հաստատման անցած հիսունհինգտ տարիների ընթացքում Երեանը բուռն զարգացում է ապրել: Արդյունաբերական ձեռնարկությունների բնակարանաշինարարության, կուլտուր - լուսավորչական, գիտության, առևտուրի, տրանսպորտի և ժողովրդատանտեսության մյուս ճյուղերի զարգացումը նպաստել է բնակչության աճին՝ ներգաղթի և բնական աճի ճանապարհով: Ներկայումս մայրաքաղաքում և նրա արվարձաններում բնակվում են շուրջ 1.200 հազար մարդ:

Երբ ստեղծվեց Երեանի կանաչապատման գլխավոր հաստակիծը, նախատեսված էր հիմնել նաև հասարակական օգտագործման մի շարք կանաչապատ տարածություններ: Սակայն ոկրտնական շրջանում այդ տեմպերը քավականին թույլ էին: 1924-28թթ. ընթացքում նորքի գեկորատիվ տնկարանի ստեղծումից հետո կանաչապատվել է ընդամենը 29.1 հա տարածություն: 1941 - 48թթ. այդ

թիվը արդեն հասավ 250 հազարի: Բացի այդ, ստեղծվեցին երկու կանաչ գոտի՝ 1085 հա ընդհանությունում տարածությամբ: Քաղաքի հիմնական զբոսայգիները՝ „Հաղթանակի”, „Երիծեռնակաբերդ”, „Սպորտային”, „Կոմիտասի”, փառտուրեն հիմնադրվել են Հայրենական մեծ պատերազմից հետո: 1968 թ. Երևանում արդեն հաշվվում էր 600 հա հասարական կանաչապատ տարածություն: 1980 թ. այդ թիվը կրկնապատկվելով հասավ 1200 հա:

Չնայած վերջին տարիներին կանաչապատման բնագավառում ձեռք բերված մեծ հաջողություններին, այնուամենայնիվ, ներկայությամբ առահնջվող 25 մ<sup>2</sup> փոխարեն քաղաքի բնակչության յուրաքանչյուր չնչին բաժին է ընկնում ընդամենը 9.2 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն: Ճարտարապետական հոյակապ կոթողներով ճարրությամբ հարավային այսպիսի մրգաշատ քաղաքը թիրեա ավելի շատ է զգում ստվերախիտ կանաչ տնկարկների կարիքը, քան միության մյուս քաղաքները:

Երեանի ընդհանությունում օգտագործման կանաչապատ տարածությունները ներկայությամբ են 4000 հա, այսինքն մեկ բնակչին բաժին է ընկնում 33.3 մ<sup>2</sup>: Խեկ հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունների աճը մոտ հինգ անգամ ետք է մնացել բնակչության աճից: Այս փաստը կարելի է բացատրել միայն ու միայն՝ կանաչապատման խիստ դանդաղ տեմպերով: Վերջին տարիներին մայրաքաղաքում պարկաշինարարական աշխատանքներ համարյա թե չեն կատարվում: Մինչդեռ, ըստ հեռանկարային պլանի, 1980 թ. հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունները պետք է կազմեին 2500 հա:

Կանաչ տնկարկների ընդարձակման գործին զգալիորեն խանգարում է նաև ոռոգման ջրի պակասը: Ներկայություն գոյություն ունեցող կանաչ տարածությունների ոռոգման համար տրամադրվում է ընդամենը 54 մին. մ<sup>3</sup> շուրջ, այն դեպքում, եթե վեցետացիոն շրջանում ոռոգման ջրի հաշվարկային պահնջը կազմում է 94 մին. մ<sup>3</sup>:

Հանրապետության ջրային ռեսուրսների սղությունը անհրաժեշտաբար հանգեցնում է եղած ջրերի ամենատեսվար օգտագործմանը: Դրա առաջին դրավականը ջրանցքների տեխնիկական, սարքին վիճակի ապահովություն ու ջուրը փակ ջրատար սիստեմով ոռոգման տեղամաս հասցնելու է: Բացի այդ, կանաչ տնկարկների ոռոգումը պետք է կանոնավորվի միաժամանակ փակ ջրատարների սիստեմով, որը դեռևս չի իրականացվում, չնայած, այդ համակարգի կառուցման նախադըմերը պատրաստ են:

Հանրահայտ է, որ բոլոր շինարարական օբյեկտները նախագծելիս հաշվի է առնվում նաև տվյալ օբյեկտի կանաչապատումը, որտեղ հաշվարկվում են պահանջվող ծախսերը և նախատեսվում կանաչապատման ծավալը (սիզամարդ, ճմապատում, ծաղկապատում, ծառերի ու թփերի տեսակաշար և այլն): Շինարարները պարտավոր են շենքը հանձնել շահագործման ոռոգման ցանցի լրիվ կառուցումով և նախատեսվող կանաչապատման լրիվ պահատով: Այդ վիճակում շենքը պետք է հանձնվի շրջովի ետի բնակվարչությանը, իսկ կանաչապատ տարածության պահպանումը և շահագործումը կախված է տարածության մեծությունից, դրվում է կամ բնակչակագործման, կամ շրջանային կանաչ տնկարկների պահպանման ու շահագործման գրառենյակների վրա, որոնց յուրաքանչյուրը տարի այդ նպատակով համապատասխան չափի ծախսեր են հատկացվում:

Երեան քաղաքում, սակայն ոչ մի կառույց շահագործման չի հանձնվում կանաչապատված վիճակում և այդ նպատակի համար նախատեսված ծախսերը

իրացվում են բոլորովին այլ նպատակներով։ Արդյունքը լինում է այն, որ շահագործման հանձնված օբյեկտները հետագայում կանաչապատվում են մեծ դժվարությամբ, մի կերպ ձեռք բերված միջոցներով, կամ իրենց՝ բնակիչների հաշվին։ Տվյալ դեպքում ստացվում են անճաշակ ու խայտարղետ կանաչվածներ։

Այդ պրակտիկան շարունակվում է նաև այսօր։ Շահումյանի շրջանի 15-րդ թաղամասի շինարարությունը 32 միլիոն ռուբլու Փինանսավորմամբ սկսվել է 1970 թ. և շարունակվում է առ այսօր, սակայն շրջապատի բարեկարգման համար նախատեսված 1.2 միլիոն ռուբլու դիմաց շինարարները դեռևս կանաչապատման ոչ մի աշխատանք չեն կատարել։ Նույն շրջանի 11-րդ թաղամասի շինարարության համար նախատեսվել է 11.4 միլիոն, իսկ կանաչապատման համար՝ 44 հազար ռուբլի սակայն ոչ մի ռուբլու կանաչապատման աշխատանքներ չեն կատարվել, չնայած թաղամասի շինարարությունը ավարտվել է։ Դանդաղ են ընթանում կանաչապատման տեմպերը նաև Նոր Նորքի 5-րդ և 6-րդ զանգվածներում։ Այդ շրջանների կանաչապատման գրասենյակներին տարեկան հատկացվում է միջին հաշվով 180 հազար ռուբլի։

Կանաչապատման համար նախատեսվող ծախսները շինարարական ծախսների համեմատ աննշան են։ Դա երեսում է վերը նշված օրինակներից, ինչպես նաև հետեւյալ թվերից։ Եթե միայն քաղաքային ռովեսի գծով կատարվող շինարարական բոլոր աշխատանքների համար տարեկան հատկացվում է 50 միլիոն ռուբլի, սապա կանաչապատման բոլոր աշխատանքների համար հատկացվում է ընդամենը 1,5 միլիոն, կամ շինարարության համար հատկացվող միջոցների 3 %։

Արարատյան դաշտի մյուս բնակավայրերի կանաչապատման աշխատանքները նույնպես զգալիորեն ետք են մնում շինարարության և ազգարնակչության աճի տեմպերից։

Համեմատաբար բարվող վիճակում է գտնվում Հոկտեմբերյան քաղաքը, որտեղ բնակչության մեկ շնչին ներկայումս բաժին է ընկնում 36.2 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն։ Ճիշտ է, 1960 թ. համեմատայլ ցուցանիշը զգալիորեն նվազել է (այն ժամանակ եղել է 49.8 մ<sup>2</sup>), սակայն վիճակը ներկայումս բավարար է։

Չնայած կշմիածին քաղաքում վերջին տասնչորս տարիների ընթացքում հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունների նկատելի աճ է տեղի ունեցել (1960 թվականին՝ 23.5, 1980 թվականին՝ 27.8 հա), այնուամենակ շնչին բաժին է ընկել 7.7 մ<sup>2</sup>։ Հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունը՝ նույն ցուցանիշի զգալի նվազում է տեղի ունեցել նաև։ Աշտարակ քաղաքում, վերջին տասը տարիներին (1963 թ. 11. 9-ի դիմաց 1980 թ. 8.2 մ<sup>2</sup>)։

Չնայած վերջին քսան տարիների ընթացքում Արտաշատ քաղաքի հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունները անշեղորեն աճել են, սակայն բնակչության թվի ուժեղ աճի հետեւանքով, որը այդ ժամանակամիջոցում ավելի քան կրկնապատկել է (1960 թվականին՝ 7579, 1980 թվականին՝ 19000), 1960 թ. 12.6 մ<sup>2</sup> դիմաց 1980 թ. Արտաշատի յուրաքանչյուր բնակչին բաժին էր ընկնում ընդամենը 8.9 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն։ Նույնպիսի պատկեր գոյություն ունի նաև Արարատ քաղաքում և Վեդի ավանում։

Բուռն զարգացում ապրող Արտաշատ քաղաքում 1963 թ., երբ բնակչու-

թյունը չէր անցնում 2000-ից, առկա էր 12.0 հա հասարակական օդտագործման կանոնաշապատ տարածություն, որի չնորհիվ բնակչության մեկ չնչին բաժին էր ընկնում մոտ 60 մ<sup>2</sup> կանաչ տարածություն: Սակայն հետագայում բնակչության աննախընթաց աճի չնորհիվ, չնայած քաղաքի հասարակական օդտագործման կանոնաշապատ տարածությունը ավելացել են մոտ հինգ անգամ, հասնելով 60 հա, սակայն, բնակչության մեկ չնչին ներկայումս բաժին է ընկնում ընդամենը 12.0 մ<sup>2</sup> հասարակական օդտագործման կանոնաշապատ տարածություն:

Վիճակը համեմատաբար բարվոք է Զարենցավանում: Վերջին քսան տարիների ընթացքում այդ երիտասարդ քաղաքի ազգաբնակչությունը ավելացել է կրկնակի անգամ: Այնուամենայնիվ, ինտենսիվ կանաչապատման չնորհիվ 1960 թ. 17.8-ի դիմաց ներկայումս Զարենցավանի յուրաքանչյուր բնակչին բաժին է ընկնում 26.0 մ<sup>2</sup> հասարակական օդտագործման կանաչապատ տարածություն:

Հնայած 1963 թ. Համեմատ (86.5 մ<sup>2</sup>) Հրազդան քաղաքի բնակչության մեկ չնչին բաժին ընկնող հասարակական օդտագործման կանաչապատ տարածությունները նվազելով հասել են 30.0 մ<sup>2</sup>, սակայն դա հանրապետության ամենաբարձր ցուցանիշներից է, որը պետք է առաջիկայում պահպանվի, չնայած Հրազդան քաղաքի բնակչությունը բուռն կերպով աճում է և ներկայումս մոտենում է 50 հազարին:

Խիստ ցածր են կանաչապատման ցուցանիշները Մեանի ավագանի երկու քաղաքներում՝ Մեանում և Կամբում: Վերջին տաս տարվա ընթացքում Կամո քաղաքի հասարակական օդտագործման կանաչապատ տարածությունները ոչ մի քառու կուտի մետրով չեն ավելացել այն դեպքում, երբ ազգաբնակչությունը աճել է 250%-ով: Հետեւանքը եղել է այն, որ ներկայումս բնակչության մեկ չնչին բաժին է ընկնում ընդամենը 4.0 մ<sup>2</sup> հասարակական օդտագործման կանաչապատ տարածություն, 1960 թ. 10.1 մ<sup>2</sup>: դիմաց:

Մեան քաղաքում և հասարակական օդտագործման կանաչապատ տարածությունների աճը վերջին տարիների ընթացքում խիստ դանդաղ է ընթանում: Ճիշտ է, այն զգալիորեն գերազանցել է ազգաբնակչության աճին, այնուամենայնիվ, դեռևս հեռու է բավարար յինելուց և ներկայումս կազմում է ընդամենը 9.9 մ<sup>2</sup> (1960 թ. 5.0 մ<sup>2</sup> դիմաց):

Վայէ և Զանգեզուր - Բնակլիմայական պայմանները այստեղ խիստ բազմազան են: Գտնվելով ծովի մակարդակից տարբեր բարձրության վրա և կլիմայական տարբեր գոտիներում այդ բնակվայրերը մեծ մասամբ ինտենսիվ կանաչապատման կարիք են զգում, որովհետեւ ընդհանուր առմամբ բնակլիմայական պայմաններն այստեղ անբարենպաստ են:

Վայէի բնակվայրերից վիճակը Համեմատաբար բարվոք է Զերմուկում: Որպես առողջարանային քաղաք, այստեղ մեծ ուշադրություն է դարձվում կանաչապատ տարածությունների ընդարձակման վրա: 1961 թ. հետո ընդհանուր օդտագործման կանաչապատման տարածությունները ավելացել են վեց անգամ, իսկ բնակչությունը՝ 22.5 %-ով: Դրա հետեւանքով այժմ Զերմուկի բնակչության մեկ շընչին բաժին է ընկնում 119 մ<sup>2</sup> ընդհանուր օդտագործման կանաչապատ տարածություն, 1961 թ. 42.0 մ<sup>2</sup> դիմաց: Հասարակական օդտագործման կանաչապատ տարածությունները չնչին տոկոս են կազմում:

Ղափանը հանրապետության ինտենսիվ կանաչապատված քաղաքներից մեկն է, որտեղ ներկայումս բնակչության մեկ չնչին բաժին է ընկնում հասարակական օդտագործման կանաչապատ տարածությունների ամենաբարձր նորման:

Այս բարեկարգ, արդ յունաբերական քաղաքում այդ տիպի կանաչապատ տա-

րածությունները անշեղորեն ավելանում են:

1960 թ. 20 հազար բնակչություն ունեցող քաղաքի կանաչապատ տարածությունները ավելի քան կրկնապատկի են: Եթե այն ժամանակ քաղաքում հաշվում էր 128 հա հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն, իսկ մեկ շնչին բաժին էր ընկնում 65 մ<sup>2</sup>, ապա ներկայումս նման տիպի կանաչապատ տարածությունները հասում են 371 հա, ընդ որում բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 121 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն:

Հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունների մեկ շնչին ընկնող ցուցանիշը բավականին բարձր է նաև Գորիխում: Եթե 1960 թ., երբ քաղաքի բնակչությունը կազմել է 11 հազար մարդ, Գորիխում եղել է 39 հա հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն (բնակչության մեկ շնչին՝ 36.6 մ<sup>2</sup>), ապա 1980 թ. այդ տիպի կանաչապատ տարածությունները կազմել են 63.0 հա, այսինքն մեկ շնչին բաժին է ընկել 20.0 մ<sup>2</sup>: Դրականն այն է, որ այստեղ հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունների աճման տեմպերը զգալիորեն գերազանցում են բնակչության աճման տեմպերին:

Վերջին տարիներին բարեկարգվել ու գեղեցկացել է Զանգեզուրի երիտասարդ ու զարգացող կենտրոններից մեկը՝ արդյունաբերական Քաջարան քաղաքը: 1964 թ., երբ քաղաքում ապրում էր 14.2 հազար մարդ, հասարակական օգտագործման կանաչապատ տարածությունները կազմում էին 22.0 հա, այսինքն՝ բնակչության մեկ շնչին բաժին՝ էր ընկնում 15.4 մ<sup>2</sup>: Հետո գայում Քաջարանի բնակչությունը զգալիորեն նվազել է, իսկ կանաչապատ տարածությունները համարյա թե չեն ավելացել: Դրա հաշվին ներկայումս այստեղ բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 19.2 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն, որը բավարար համարել չի կարելի:

Կանաչապատման նորմաները՝ Հայկական ՍՍՀ-ի խիստ բազմազան բնակլիմայական պայմանները պահանջում են կանաչապատման նորմաները որոշելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ունենալ դիմերենցիալ մոտեցում:

Կանաչապատման ամենաբարձր նորմաները անհրաժեշտ է սահմանել Արարատյան դաշտի, ինչպես նաև Վայքի, Զանգեզուրի և Մեղրիի ցածրադիր շրջանների համար:

Ներկայումս համաշխահային ստանդարտով՝ հարավային, տաք, անբարեկ նպաստ կլիմայական պայմաններում գտնվող քաղաքների համար սահմանված է յուրաքանչյուր բնակչին 50-100 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն: Այնպիսի քաղաքները, ինչպիսիք են Դալասը, Նոր Օրլեանը (ԱՄՆ), Բարսելոնը (Իսպանիա), Օրանժը (Ալժիր), ներկայումս ապահովում են այդ նորմաները: ՍՍՀՄ-ի հարավային քաղաքները այդ ցուցանիշներով բավականին են են մնում, ընդ որում Բաքվում, Աշխաբադում, Տաշքենդում, Սամարղանդում, Կրասնովոլուսկում մեկ բնակչին բաժին է ընկնում 5-10 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն: Երեսնում ինչպես նշեցինք, այդ ցուցանիշը կազմում է 9.2 մ<sup>2</sup>:

Ապագայի քաղաքները էապես տարբերվելու են ժամանակակից հակա, համարյա կանաչապատը քաղաքներից, նրանցում ամեն ինչ պետք է նպաստի մարդկանց աշխատանքին և լիարժեք հանգստին: Ամենից առաջ ապագայի քաղաքները պետք է աչքի ընկնեն բուսականության մեջ ծավալով: Խոշոր զբոս-

այդիները, պուրակները, անտառապուրակները, բուլվարները, բակային տնկարկները ստեղծելու են խական, քաղաք - այդիների, տպալորություն: Կառուցապատման նշանաբանն է լինելու, ոչ թե կանչը քաղաքի ներսում, այլ քաղաքը կանաչի ներսում: Այս բանը հնարավոր է իրագործել միայն ու միայն ինտենսիվ կանաչապատման չնորհիվ: Ապագա քաղաքներում յուրաքանչյուր բնակչին հասնելու է 100 - 150 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն: Դա նշանակում է, որ 500 հազար բնակիչ ունեցող քաղաքը ունենալու է 5000 - 7500 հա միայն հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն: Այդ բանը միանգամայն հնարավոր է իրագործել, եթե կանաչապատման տակ դրվեն քաղաքի շինարարությունից ազատ բոլոր տարածությունները:

Համաշխարհային պարկաշինարարության փորձը ցույց է տվել, որ Երևանի տիպի հարավային քաղաքներում առավելությունը պետք է տալ խիստ տնկարկներին՝ առատ ստվերով ապահովելու համար: Խորհուրդը է տրվում մեկ հեկտարի վրա տեղադրել 300 - 350 ծառ (75 - 80 %) և 1500 - 2000 թուփ: Բաց տարածությունները չպետք է գերազանցեն 15 - 20 %-ից: Պետք է հատկապես գերակշռեն ջրային մակերեսները՝ երբեմն կանաչ տնկարկների հաշվին: Պարկային կառույցները պետք է զբաղեցնեն տարածքի ընդամենը 5%:

Այս նորմաները միանգամայն ընդունելի են մեր հանրապետության վերը նշված ըրջանների համար:

Հայկական ՍՍՀ-ի լեռնատափաստանային շրջանների համար միանգամայն ընդունելի են այն նորմաները, որոնք սահմանված են երկրագնդի բարեխառն գոտու տափաստանային շրջանների համար: Տվյալ դեպքում մեկ բնակչին պետք է բաժին ընկնի 30 - 40 մ<sup>2</sup>: կանաչապատ տարածություն այն դեպքում, երբ Հայկական ՍՍՀ-ի տափաստանային շրջաններում գտնվող բնակավայրերում (Շիրակի դաշտ, Սպիտակ, Ապարան-Հրազդան, Սեանի ավազան, Սխիան և յլն) այդ նորմաները հեռու են բավարար լինելուց: Նման շրջանների համար օրինակելի են համարվում հետեւյալ ցուցանիշները, ծառերի խտությունը մեկ հեկտարի վրա՝ 150 - 200 հատ (30 - 40 %), թփեր՝ 1200 - 1500 հատ, հրապարակներ՝ ծառուղիներ՝ 15, գաղոն՝ 30, ջրային մակերեսներ՝ 10 (կանաչ տնկարկների հաշվին), պարկային կառույցներ՝ 5.0 %:

Մեր հանրապետության որոշ շրջաններ գտնվում են բարձրեռնային գոտում, ծովի մակարդակից 2000 և ավելի մետր բարձրության վրա: Բնակլիմայական պայմանները այստեղ անսուր են երկարգնդի հյուսիսային շրջանների բնակավայրերին, որտեղ ընդունված են կանաչապատման բավականին ցածր նորմաներ՝ յուրաքանչյուր բնակչին 20 - 25 մ<sup>2</sup>: հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն, որը միանգամայն ընդունելի է բարձրեռնային շրջաններում գտնվող մեր բնակավայրերի համար: Այստեղ օրինակելի են համարվում հետեւյալ ցուցանիշները: ծառերի խտությունը մեկ հեկտարի վրա՝ 1000 - 1500, բաց տարածություններ՝ 55%, (որից ծառուղիներ և հրապարակներ՝ 15, գաղոն՝ 30 հանապատ տարածություններ՝ 45, ջրային տարածություններ՝ 10, պարկային կառույցներ՝ 10 %):

Անտառային գոտում գտնվող շրջանների համար պիտանի են կանաչապատման այն միջին նորմաները, որոնք սովորաբար կիրառվում են աշխարհի և ՍՍՀ-ի անալոգ պայմանների համար: Այստեղ յուրաքանչյուր բնակչին հատկացվում է 20 - 30 մ<sup>2</sup> հասարակական օգտագործման կանաչապատ տարածություն, ընդ որում պարկերում պետք է ապահովել հետեւյալ ցուցանիշները: ծառուղիները պահպանվում են առաջարկություններում:

ուրի խոռոքյունը մեկ հեկտարի վրա՝ 200-240 հատ (50-60 %), թփերի քանակությունը՝ 1500-2000, ճանապարհներ և հրապարակներ՝ 15, գաղոնապատ տարածություններ՝ 25, ջրային մակերեսներ՝ 25-30 (կանաչ տնկարկների հաշվին), պարկային կառույցներ՝ 10 %:

Այս նորմաները մոտավոր են և, ելնելով կոնկրետ պայմաններից, դրանք կարելի է որոշակի փոփոխության ենթարկել: Կարեռն այն է, ձայկական ՍՍՀ-ի բնակչության տարրեր պայմաններում կանաչապատման հարցին դիմերենց ված մուեցում ցուցաբերելով, կապահովենք մեր բնակավայրերի սանիտարակիրենիկ, միկրոկլիմայական, գեղագիտական կոմֆորտը:

Арутюняն Լ. В., Саакян Կ. В.

## СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ МАТЕРИАЛОВ ОЗЕЛЕНЕНИЯ НАСЕЛЕНИНЫХ ПУНКТОВ АРМЯНСКОЙ ССР

Важным показателем при озеленении населенных пунктов является соотношение разных типов и категорий зеленых насаждений и площадь общественного и общего пользования, приходящаяся на душу населения. Этим решаются некоторые важнейшие санитарно-гигиенические и микроклиматические вопросы озеленения. С помощью статистического анализа цифровых данных озеленения выяснены некоторые важные вопросы планировки и застройки населенных пунктов, установлены перспективные объемы зеленых насаждений для каждого населенного пункта исходя из санитарно-гигиенических и микроклиматических особенностей.